ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 16.01.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ

ՔՆՆՈՂ ԱՆՁԻ

թիվ ՍՑ-ԷՍ-2018/206

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 25.12.2018թ. թիվ 27/26-3/24110-18 գրությամբ «Նյու Ինդասթրիզ» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ 00883436) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեց հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ քաղաքաշինության կոմիտեի (այսուհետ՝ նաև Պատվիրատու) 19.12.2018թ. թիվ 02/16.4/6279-18 գրության հիման վրա, 25.12.2018թ. նախաձեռնել է «Նյու Ինդասթրիզ» ՍՊԸ-ին (այսուհետ՝ նաև Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետ՝ նաև Ցուցակ) ներառելու ընթացակարգ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքերը:

2. <u>ՀՀ քաղաքաշինության կոմիտեի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

ՀՀ քաղաքաշինության կոմիտեն 19.12.2018թ. թիվ 02/16.4/6279-18 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

«2018թ. ապրիլի 7-ին կազմակերպված «ՀՀՔՊԿ-ԳՀԱՇՁԲ-18/7» ծածկագրով ՀՀ Արարատի մարզի Արևաբույրի միջնակարգ դպրոցի կառուցման նախագծահետազոտական աշխատանքների ձեռքբերման ընթացակարգի արդյունքում 2018թ. մայիսի 18-ին «ՀՀ ԿԱ քաղաքաշինության պետական կոմիտեի աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկի (այսուհետ՝ Կոմիտե) և «Նյու Ինդասթրիզ» ՍՊԸ-ի միջև կնքվել է N ՀՀՔՊԿ-ԳՀԱՇՁԲ-18/7 պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր):

Հիմք ընդունելով պատասխանատու ստորաբաժանման կողմից ներկայացված առաջարկությունը, Պայմանագրի 2.1.3 կետը, ինչպես նաև «Նյու Ինդասթրիզ» ՍՊԸ-ի գրությունը, Կոմիտեն վերը նշված կազմակերպության հետ կնքված Պայմանագիրը 2018թ. դեկտեմբերի 15-ից միակողմանի լուծել է»:

Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստերին մասնակցում էր Պատվիրատուի լիազորված ներկայացուցիչ Արտավազդ Նազարեթյանը:

3. <u>«Նյու Ինդասթրիզ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը դիմել է «Նյու Ինդասթրիզ» ՍՊԸ-ին՝ հնարավորություն ընձեռելով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 25.12.2018թ. թիվ 27/26-3/24110-18 գրությամբ Բողոքներ քննող անձի մոտ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել Ընկերության գրավոր դիրքորոշումը, սակայն վերջինիս կողմից որևէ գրավոր դիրքորոշում չի ներկայացվել:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով Բողոքներ քննող անձի մոտ կայանալիք նիստերի ժամանակացույցի վերաբերյալ՝ չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը նիստերին:

4. <u>ՍՑ-ԷՍ-2018/206 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

Բողոքներ քննող անձն ուսումնասիրել է ՀՀ ֆինանսների նախարարության 25.12.2018թ. թիվ 27/26-3/24110-18 գրությունը և կից փաստաթղթերը, ՀՀ քաղաքաշինության կոմիտեի 19.12.2018թ. թիվ 02/16.4/6279-18 գրությունը, «ՀՀ ԿԱ քաղաքաշինության պետական կոմիտեի աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկի և «Նյու Ինդասթրիզ» ՍՊԸ-ի միջև 18.05.2018թ. կնքված ՈՀՀՔՊԿ-ԳՀԱՇՁԲ-18/7 ծածկագրով գնման պայմանագիրը.

«ՀՀ ԿԱ քաղաքաշինության պետական կոմիտեի աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկի և «Նյու Ինդասթրիզ» ՍՊԸ-ի միջև 18.05.2018թ. կնքվել է ՈՀՀՔՊԿ-ԳՀԱՇՁԲ-18/7 ծածկագրով գնման պայմանագիրը (այսուհետ՝ նաև Պայմանագիր):

Պայմանագրի՝

- 1.1 կետի համաձայն՝ Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է ՀՀ Արարատի մարզի Արևաբույրի միջնակարգ դպրոցի կառուցման նախագծահետազոտական աշխատանքների կատարման պարտավորությունը (այսուհետ՝ Աշխատանք)՝ համաձայն նույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:
- 1.2 կետի համաձայն՝ Աշխատանքը կատարվում է նույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներում:
- 2.1.3 կետի «բ» ենթակետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է նույն պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե խախտվել է Աշխատանքի կատարման ժամկետը:
- 3.1 կետի համաձայն՝ Կատարված աշխատանքն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը

Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

• 4.1 կետի համաձայն՝ Պայմանագրով Կատարողի կատարման ենթակա աշխատանքի գինը կազմում է 2,440,000 ՀՀ դրամ:

• 7.9 կետի համաձայն՝ Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

Պայմանագրի N 1 հավելվածով նախատեսված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն՝ Ընկերությունը պարտավորվել է կատարել աշխատանք՝ հետևյալ տեխնիկական բնութագրով.

«1. Իրավիճակի նկարագիրը. Գոյություն ունեցող դպրոցի միահարկ մասնաշենքը կառուցվել է 1965թ, ընդհանուր մակերեսը 450քմ, 120 աշ/տեղ հզորությամբ: Ներկայումս դպրոց հաճախող աշակերտների թիվը 154 է:

Կոնստրուկտիվ համակարգը՝ տուֆե քարի շարվածքով արտաքին կրող պատեր, արտաքինից սվաղված ց/ավազե շաղախով:

Կառույցը չի բավարարում գործող նորմատիվային պահանջներին և կրթական ծրագրերի մատուցման համար բավարար մակերեսներով ապահովված չէ, դպրոցի հողատարածքը մոտ 500քմ է և ընդլայնման համար անհրաժեշտ տարածքներ չկան:

2. Կատարման ենթակա աշխատանքների համառոտ բնութագիրը. Նախատեսվում է հատկացված 1.5 հա տարածքում մշակել 180աշ/տեղով նոր դպրոցի կառուցման նախագծանախահաշվային փաստաթղթեր՝ համաձայն ՀՀ քաղաքաշինության նախարարի 20.02.2018թ. «Մոդուլային դպրոցների տիպարային նախագծերի կատալոգը հաստատելու մասին» N27-Ա հրամանով հաստաված պահանջների:

Նախագծային (առաջնահերթ) լուծումների շրջանակներում առաջարկվում է նախատեսել՝

- ուսումնական մասնաշենք (-եր) և մարզադահլիճ (որն անհրաժեշտության դեպքում կծառայի նաև հանդիսությունների կազմակերպման համար),

- ներքին և արտաքին ինժեներական ցանցեր՝ ջրամատակարարում, կոյուղի, ջեռուցում, օդափոխություն, էլմատակարարում, ցածր լարում, կաթսայատուն, սեպտիկ հոր,

- տարածքի բարեկարգում (այդ թվում կանաչապատում, ցանկապատ, ճարտարապետական այլ ձևեր):

Բացի այդ, գլխավոր հատակագծում նախատեսել հնարավորություն երկրորդ հերթի (առաջնահերթ ծրագրի ավարտից հետո) շինարարության՝ նոր ուսումնական մասնաշենքի և հանդիսությունների դահլիճի կառուցման համար:

3. Նախագծման հիմնավորում և նորմատիվային պահանջներ. Հիմնավորում՝

- ՀՀ կառավարության 28.12.2017թ N1717-Ն որոշում «ՀՀ 2018 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին»:

Նախագծման հիմք հանդիսացող փաստաթղթեր.

- Ճարտարապետահատակագծային առաջադրանք և տեխնիկական պայմաններ

- Ինժեներաերկրաբանական հետազննության եզրակացություն

- Նախագծային առաջադրանք

- Հանույթ

- Չափագրություններ

Նորմատիվային պահանջներ.

- ՀՀ կառավարության 19.03.2015թ. թիվ 596-Ն որ. ՀՀ կառուցապատման նպատակով թույլտվությունների և այլ փաստաթղթերի տրամադրման կարգը հաստատելու և ՀՀ կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին»,

- ՀՀ քաղաքաշինության նախարարի 20.02.2018թ «Մոդուլային դպրոցների տիպարային նախագծերի կատալոգը հաստատելու մասին» N27-Ա հրաման,

- ՀՀ քաղաքաշինության նախարարի 03.02.2006թ թիվ 24-Ն հրաման՝ ՀՀՇՆ II-6.02-2006 «Սեյսմակայուն շինարարության նախագծման նորմեր»,

- ՀՀ քաղաքաշինության նախարարի 2014 թվականի ապրիլի 9-ի «Հանրակրթական նշանակության շենքեր» N 103-Ն հրաման,

- ՀՀ առողջապահության նախարարի 2017 թվականի մարտի 28-ի N 12-Ն հրաման:

- ՀՀ կառավարության 16.02.2006թ թիվ 392-Ն որ. «Հաշմանդամների և բնակչության սակավաշարժուն խմբերի համար սոցիալական, տրանսպորտային և ինժեներական ենթակառուցվածքների մատչելիության ապահովման կարգը հաստատելու մասին»,

- ՀՀ կառավարության 25.12.2014թ թիվ 1504-Ն որ. «Պետական միջոցների հաշվին կառուցվող (վերակառուցվող, նորոգվող) օբյեկտներում էներգախնայողության և էներգաարդյունավետության բարձրացմանն ուղղված միջոցառումների կիրառման մասին»,

- ՀՕ-110-Ն 21.06.2014թ. «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենք,

ՀՀ կառավարության 04.05.2017թ. «Գնումների գործընթացի կազմակերպման կարգը հաստատելու և ՀՀ կառավարության 10.02.2011թ. թիվ 168-Ն որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 526-Ն որոշման Կարգի 33-րդ կետի 10-րդ ենթակետի պահանջներ:

4. Նախագծման փուլերը. Նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակում ՀՀ քաղաքաշինության նախարարի 11.09.2017թ N128-Ն հրամանի համաձայն:

Նախագծային աշխատանքներն իրականացնել 1 փուլով՝ «Աշխատանքային նախագիծ»:

Աշխատանքային նախագիծը մշակել էսքիզային լուծումները պատվիրատուի հետ համաձայնեցնելուց հետո:

Էսքիզային լուծումները պատվիրատուին ներկայացնել պայմանագիրը սահմանված կարգով ուժի մեջ մտնելուց հետո 30 օրացուցային օրվա ընթացքում:

5. Նախագծի կազմը. «Աշխատանքային նախագիծ».

1.Գլխավոր հատակագիծ

2.Ճարտարապետաշինարարական մաս՝

- ճարտարապետական մաս

- Կոնստրուկտորական մաս

3. Ինժեներական մաս (ներքին և արտաքին)՝

- էլեկտրամատակարարման, կոյուղու, ջրամատակարարման, օդափոխության, ջեռուցման, գազամատակարարման համակարգեր, ռադիոկապի, հեռուստատեսության, ինտերնետի ցանցեր, տեսահսկում, հակահրդեհային ազդանշանում, ալեհավաք

- սառնամատակարարում՝ ըստ նախագծային առաջադրանքի:

4. Շինարարության կազմակերպման նախագիծ՝ այդ թվում քանդման և ապամոնտաժման աշխատանքների կազմակերպման նախագիծ (ըստ անհրաժեշտության)

5. Շինարարական աշխատանքների ծավալաթերթ և նախահաշիվ

6. Շինարարական և մոնտաժային բոլոր աշխատանքային գծագրերը լրիվ կազմով և իրենց տեքստային մասերով:

Նախագծով նախատեսել՝

- Շրջակա միջավայրի պահպանմանն ուղղված միջոցառումներ

- Հաշմանդամների համար մատչելիության ապահովմանն ուղղված միջոցառումներ:

- Էներգախնայողությանն և էներգաարդյունավետությանն ուղղված միջոցառումներ:

- Այլ միջոցառումներ, որոնք նախատեսված են ՀՀ օրենսդրությամբ:

6. Այլ պահանջներ.

Համաձայնեցումներ.

Նախագծի համաձայնեցում համայնքի ղեկավարի, ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության, ինչպես նաև ըստ անհրաժեշտության՝ ՀՀ առողջապահության և ՀՀ կրթության և գիտության նախարարությունների հետ:

Նախագծի հաստատում Պատվիրատուի կողմից:

Եզրակացություններ.

Նախագծանախահաշվային փաստաթղթերի Նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման համար հատկացված ֆինանսական միջոցների շրջանակներում.

1.ինժեներաերկրաբանական հետազննության եզրակացության ձեռքբերում,

2.համալիր փորձաքննության ապահովում:

Շինանյութերի ընտրություն.

Նախագծում և Ծավալաթերթում օգտագործվող շինարարական նյութերի, պատրաստվածքների հատկանիշների մանրամասն և սպառիչ նկարագրում:

Տեղական արտադրության և Հայաստան ներմուծվող շինանյութերի օգտագործում:

Նախագծի լրակազմ.

Նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակում համակարգչային ծրագրով:

Նախագծանախահաշվային փաստաթղթերի /տեքստային և գծագրական նյութերի, նախահաշվի/ ամբողջական փաթեթի ներկայացում 5 օրինակից՝ հայերեն լեզվով, փաստաթղթային տարբերակով և էլեկտրոնային կրիչով:

Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն՝ պայմանագրի կատարման ժամկետ է սահմանվել՝ Պայմանագիրը սահմանված կարգով ուժի մեջ մտնելուց հետո այն պատվիրատուի կողմից կատարողին գրությամբ ուղարկելու օրվան հաջորդող օրվանից 150 օրացուցային օր (մինչև 29.10.2018թ.):

Ընկերությունը Պայմանագրով նախատեսված ժամկետում պատվիրատուին չի տրամադրել Պայմանագրով նախատեսված նախագծահետազոտական փաստաթղթերը:

ՀՀ քաղաքաշինության կոմիտեի աշխատակազմի ղեկավարի 2018թ. հունվարի 23-ի N01-Ա հրամանի հավելվածով ստեղծված նախագծային աշխատանքների գնման գործընթացների կազմակերպման պատասխանատու ստորաբաժանման (այսուհետ՝ նաև պատասխանատու ստորաբաժանման) 29.08.2018թ. տեղի ունեցած նիստի արձանագրությամբ պատասխանատու ստորաբաժանումը՝ հաշվի առնելով «Նյու Ինդասթրիզ» ՍՊԸ-ի կողմից էսքիզային նախագծի չներկայացման փաստը՝ որոշեց «Նյու Ինդասթրիզ» ՍՊԸ նախագծային կազմակերպությանը հանձնարարել 7-օրյա ժամկետում ներկայացնել ՀՀ Արարատի մարզի Արևաբույրի միջնակարգ դպրոցի կառուցման էսքիզային նախագիխը, չներկայացնելու դեպքում՝ միակողմանի լուծել պայմանագիրը:

18.09.2018թ. կայացած՝ պատասխանատու ստորաբաժանման և կապալառու կազմակերպությունների հետ նախագծերի էսքիզային տարբերակների համատեղ քննարկման նիստի արձանագրության համաձայն՝ «Նյու Ինդասթրիզ» ՍՊԸ-ն ներկայացրեց Արևաբույրի նորակառույց դպրոցի նախագծի էսքիզային տարբերակը, առկա ելակետային տվյալները, նախատեսվող ճարտարապետահատակագծային և կոնստրուկտիվ լուծումներն ու դրանց ընտրության վերաբերյալ համապատասխան հիմնավորումները:

Որոշվեց՝ «Նյու Ինդասթրիզ» ՍՊԸ-ին առաջարկել ՀՀ քաղաքաշինության կոմիտե ներկայացնել ՀՀ Արարատի մարզի Արևաբույրի նորակառույց (մոդուլային) դպրոցի կառուցման աշխատանքային նախագիծը՝ համաձայն 18.05.2018թ. ՈՀՀՔՊԿ-ԳՀԱՇՁԲ-18/7 պայմանգրով սահմանված պայմանների և ժամանակացույցի՝ հաշվի առնելով նիստում օբյեկտի էսքիզային նախագծի վերաբերյալ պատասխանատու ստորաբաժանման կողմից ներկայացված դիտողություններն ու առաջարկությունները:

16.11.2018թ. տեղի ունեցած՝ պատասխանատու ստորաբաժանման և կապալառու կազմակերպությունների հետ նախագծային փաստաթղթերի համատեղ քննարկման նիստի արձանագրության համաձայն՝ «Նյու Ինդասթրիզ» ՍՊԸ-ն ներկայացրեց Արևաբույրի նորակառույց դպրոցի նախագծի առկա տարբերակը, որը թերի էր և չէր համապատասխանում պետական գնման պայմանագրով սահմանված պահանջներին:

Հանձնաժողովի կողմից այն գնահատվեց ոչ բավարար և առաջարկվեց սեղմ ժամկետում կատարել նախագծային փաստաթղթերի հիմնովին լրամշակում:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Կապալառուն զգուշացվեց առաջիկայում պայմանագրով նախատեսված պատժամիջոցների կիրառման վերաբերյալ:

«Նյու Ինդասթրիզ» ՍՊԸ-ն Պատվիրատուին ուղղված գրությամբ (մտից համար 5/12062-18 առ 05.12.2018թ.) հայտնել է հետևյալը.

««Նյու Ինդասթրիզ» ՍՊԸ-ն իրականացնում է ՀՀ Արարատի մարզի Արևաբույրի միջնակարգ դպրոցի կառուցման նախագծահետազոտական աշխատանքները՝ համաձայն ՈՀՀՔՊԿ-ԳՀԱՇՁԲ-18/7 ծածկագրով պայմանագրի: Նախագծային աշխատանքներն իրականացնելիս Ընկերությունում ի հայտ են եկել մի շարք խնդիրներ, որոնց պատճառով «Նյու Ինդասթրիզ» ՍՊԸ-ի հետագա բնականոն աշխատանքները չէին կարող իրականացվել: Հայտնում ենք Ձեզ, որ Ընկերությունը չի կարող ավարտին հասցնել ՀՀ Արարատի մարզի Արևաբույրի միջնակարգ դպրոցի կառուցման նախագծահետազոտական աշխատանքները»:

«Նյու Ինդասթրիզ» ՍՊԸ-ին ուղղված՝ 18.12.2018թ. թիվ 02/16.4/6257-18 գրությամբ ՀՀ քաղաքաշինության կոմիտեն հայտնել է հետևյալը.

«2018թ. մայիսի 18-ին «ՀՀ ԿԱ քաղաքաշինության պետական կոմիտեի աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկի (այսուհետ՝ Կոմիտե) և «Նյու

Ինդասթրիզ» ՍՊԸ-ի միջև կնքվել է N ՀՀՔՊԿ-ԳՀԱՇՁԲ-Ի8/7 պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր):

Հիմք ընդունելով Պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ պատասխանատու ստորաբաժանման կողմից ներկայացված առաջարկությունը, Պայմանագրի 2.1.3 կետը, ինչպես նաև «Նյու Ինդասթրիզ» ՍՊԸ-ի 05.12.2018թ. գրությունը, Կոմիտեն 2018թ. դեկտեմբերի 19-ից միակողմանի լուծում է վերը նշված Պայմանագիրը՝ 2,440,000 ՀՀ դրամի չափով»:

Պայմանագրի միակողմանի լուծման վերաբերյալ ծանուցումը Պատվիրատուի կողմից 18.12.2018թ. հրապարակվել է նաև www.gnumner.am պաշտոնական տեղեկագրում:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

Օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք) 6-րդ հոդվածի՝

- 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը.
- 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող անձի մոտ՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է

կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Այսպիսով, Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ.

- «ՀՀ ԿԱ քաղաքաշինության պետական կոմիտեի աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկի և «Նյու Ինդասթրիզ» ՍՊԸ-ի միջև 18.05.2018թ. կնքվել է ՈՀՀՔՊԿ-ԳՀԱՇՁԲ-18/7 ծածկագրով գնման պայմանագիրը, որի կատարման ժամկետ է սահմանվել՝ Պայմանագիրը սահմանված կարգով ուժի մեջ մտնելուց հետո այն պատվիրատուի կողմից կատարողին գրությամբ ուղարկելու օրվան հաջորդող օրվանից 150 օրացուցային օր (մինչև 29.10.2018թ.):

- Ընկերությունը Պայմանագրով նախատեսված ժամկետում Պատվիրատուին չի տրամադրել Պայմանագրով նախատեսված նախագծահետազոտական փաստաթղթերը:

- Պատվիրատուի պատասխանատու ստորաբաժանումը 29.08.2018թ., 18.09.2018թ., 03.11.2018թ., 16.11.2018թ., հրավիրված նիստերի ընթացքում ներկայացրել է Ընկերության կողմից ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքները, նշել է դրանցում առկա թերությունները, տվել է հանձնարարականներ և աշխատանքների փուլային կատարման համար սահմանել է միջանկյալ ժամկետներ, սակայն «Նյու Ինդասթրիզ» ՍՊԸ-ի կողմից Պայմանագրով ստանձնած պարտավորությունների պատշաճ կատարումն ապահովելու ուղղությամբ միջոցներ չեն ձեռնարկվել:

- «Նյու Ինդասթրիզ» ՍՊԸ-ն 05.12.2018թ. դիմել է Պատվիրատուին՝ տեղեկացնելով Պայմանագրով սահմանված պարտավորությունները կատարելու և Պայմանագրով նախատեսված աշխատանքներն ավարտին հասցնելու անհնարինության մասին:

- «ՀՀ ԿԱ քաղաքաշինության պետական կոմիտեի աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկի և «Նյու Ինդասթրիզ» ՍՊԸ-ի միջև 18.05.2018թ. կնքված ՈՀՀՔՊԿ-ԳՀԱՇՁԲ-18/7 գնման պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանի ամբողջ ծավալով լուծվել է և Պայմանագրի միակողմանի լուծման վերաբերյալ ծանուցումը 18.12.2018թ. հրապարակվել է www.gnumner.am պաշտոնական տեղեկագրում:

Բողոքներ քննող անձը գտնում է, որ «Նյու Ինդասթրիզ» ՍՊԸ-ն Պայմանագրով նախատեսված աշխատանքները նույն Պայմանագրով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներում

չկատարելով՝ խախտել է Պայմանագրի 1.1 կետով ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է Պատվիրատուի կողմից Պայմանագրի միակողմանի լուծմանը:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Բողոքներ քննող անձը գտնում է, որ առկա է «Նյու Ինդասթրիզ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով սահմանված հիմքը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով, 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. ՀՀ ֆինանսների նախարարության կողմից Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 25.12.2018թ. թիվ 27/26-3/24110-18 գրությամբ «Նյու Ինդասթրիզ» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ 00883436) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել:

2. «Նյու Ինդասթրիզ» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրվանից:

ՀՀ գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝

ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ